

Կ Ա Ր Ծ Ի Ք
ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍԻ

Քրիստինե Մուրադի Թաթոսյանի՝ «Ապակենտրոնացման ազդեցությունը տեղական տնտեսական զարգացման վրա (ՀՀ նյութերով)» թեմայով ատենախոսության վերաբերյալ ներկայացված Ը.00.02 «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար

Ատենախոսության թեմայի արդիականությունը. Ապակենտրոնացման գործընթացները մեծ դեր և նշանակություն են ստանում հատկապես այն երկրներում, որտեղ իրականացվում են վարչատարածքային բարեփոխումների ակտիվ գործընթացներ, ինչի արդյունքում ապակենտրոնացումը մեծ մարտահրավեր է դարձել հատկապես զարգացող երկրների համար:

ՀՀ-ում վարչատարածքային բարեփոխումների գործընթացը մեկնարկել է 2011 թվականից, երբ ընդունվեց «Համայնքների խոշորացման և միջհամայնքային միավորումների ձևավորման» հայեցակարգը, ինչը հիմնավորում էր ՀՀ-ում վարչատարածքային բարեփոխումների իրականացման կարևորությունն ու անհրաժեշտությունը: Իսկ արդեն 2015 թվականից սկսած ՀՀ-ում լայն թափով մեկնարկեց համայնքների խոշորացման գործընթացը, որի արդյունքում համայնքների թիվը էականորեն կրճատվեց՝ 915-ից դառնալով 71-ը:

Այնուհանդերձ, ՀՀ վարչատարածքային բարեփոխումների գործընթացներով պայմանավորված, խիստ անհրաժեշտություն է առաջանում խոշորացված համայնքներում վերլուծել հարկաբյուջետային ապակենտրոնացման մակարդակը, վերջինիս ազդեցությունը տեղական տնտեսական ցուցանիշների վրա, ինչպես նաև գնահատել լիազորությունների և ֆինանսական հնարավորությունների համաչափությունը, որի արդյունքում առկա հիմնախնդիրների բացահայտման պայմաններում հնարավոր կլինի մշակել այնպիսի

գործիքակազմեր, որոնք թույլ կտան համայնքներում գնահատել ապակենտրոնացման գործընթացների խորացման առաջիկա մարտահրավերները և խոչընդոտները:

Հաշվի առնելով այն, որ ՀՀ վարչատարածքային բարեփոխումների համատեքստում վերջին տարիներին ապակենտրոնացման գործընթացների խորացման նպատակադրման պայմաններում մինչ օրս չի իրականացվել նմանօրինակ վերլուծություն՝ հեղինակը մեկնաբանում է, որ ոլորտի մարտահրավերների գնահատման տեսանկյունից համապատասխան գործիքակազմերի մշակումը շատ կարևոր քայլ կարող է համարվել ՀՀ տեղական ինքնակառավարման համակարգի զարգացման տեսանկյունից: Հեղինակը նշում է, որ այն կարող է նաև նպաստել համայնքների հնգամյա զարգացման թիրախային ծրագրերի և երկարաժամկետ արդյունավետ քաղաքականությունների մշակման գործընթացների կատարելագործմանը՝ նշված ուսումնասիրության և վերլուծության իրականացման անհրաժեշտությամբ էլ պայմանավորելով ատենախոսության թեմայի արդիականությունը և հետազոտության կարևորությունը:

Այս համարադրություն հետազոտության թեման արդիական է, իսկ հիմնախնդրի լուծման ուղիների նախանշումը՝ անհրաժեշտություն:

Ատենախոսության նպատակն ու խնդիրները. Ատենախոսության հիմնական նպատակն է գնահատել ՀՀ համայնքներում վարչական և ֆինանսական ապակենտրոնացման առկա մակարդակը, վերջինիս ազդեցությունը տեղական տնտեսական զարգացման վրա՝ առաջարկելով ՀՀ համայնքներում լիազորությունների ապակենտրոնացման գործընթացների արդյունավետության բարձրացման ուղիներ:

Նշյալ նպատակի իրագործման համար ատենախոսությունում սահմանվել են հետևյալ խնդիրները.

«1. Վերլուծել ՀՀ վարչատարածքային բարեփոխումների համեմատաբար վաղ փուլերում խոշորացված համայնքների եկամուտների ապակենտրոնացման մակարդակները՝ խոշորացումից առաջ և հետո ժամանակահատվածի տվյալների կտրվածքով,

2. Հետազոտել ապակենտրոնացման մակարդակի հաշվարկի և լիազորությունների ապակենտրոնացման համակարգի միջազգային փորձը, ինչպես նաև լիազորությունների

ապակենտրոնացման շրջանակներում ֆինանսական ռեսուրսների ապահովմանն ուղղված մեխանիզմները,

3. Գնահատել ՀՀ խոշորացված համայնքների ծախսերի արդյունավետության մակարդակը՝ մեկ շնչին բաժին ընկնող որոշ ծախսատեսակների համադրման միջոցով,

4. Համեմատաբար սկզբնական փուլերում խոշորացված ՀՀ համայնքներում հարկաբյուջետային ապակենտրոնացման ցուցանիշների հիման վրա մշակել խոշորացման ազդեցության գնահատման մեթոդաբանություն,

5. Բացահայտել համայնքների ղեկավարների լիազորությունների՝ ոչ ամբողջ ծավալով իրականացման հիմնական խոչընդոտները և մշակել դրանց արդյունավետության գնահատման գործիքակազմ,

6. Իրականացնել գործոնային վերլուծություն ՀՀ խոշորացված համայնքների տնտեսական զարգացման վիճակը բնութագրող ցուցանիշների հիման վրա,

7. Մշակել ՀՀ խոշորացված համայնքների եկամուտների և ծախսերի ապակենտրոնացման ցուցանիշների համակարգ,

8. Գնահատել ՀՀ խոշորացված համայնքների հարկաբյուջետային ապակենտրոնացման մակարդակը բնութագրող ցուցանիշների փոփոխության ազդեցությունը տեղական տնտեսական զարգացման վիճակը բնութագրող ցուցանիշների վրա,

9. Բացահայտել ՀՀ տեղական ինքնակառավարման համակարգում ապակենտրոնացման համակարգի գործող վիճակը, ներկայացնել ոլորտի բարելավմանն ուղղված առաջարկություններ,

10. Ընդգծել ՀՀ տեղական ինքնակառավարման համակարգում ապակենտրոնացման արդյունավետ և գործող համակարգի ներդրման անհրաժեշտությունը, հիմնական մարտահրավերներն ու խոչընդոտները, և առաջարկել դրանց արդյունավետության բարձրացման այնպիսի ուղիներ, որոնք կարող են միաժամանակ նպաստել նաև տեղական տնտեսական զարգացմանը»:

Ատենախոսության կառուցվածքը և հիմնական բովանդակությունը.

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից և առաջարկություններից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածից: Ատենախոսությունը շարադրված է 162 էջի վրա՝ առանց հավելվածների:

Ատենախոսության *ներածության հատվածում* հիմնավորվել է թեմայի արդիականությունը, ձևակերպվել են հետազոտության օբյեկտն ու առարկան, նպատակը, խնդիրները, տեսական, մեթոդաբանական և տեղեկատվական հիմքերը, հիմնական արդյունքները, գիտական նորույթներն ու դրանց գործնական նշանակությունը, ինչպես նաև աշխատանքի կառուցվածքն ու ծավալը:

Ատենախոսության առաջին՝ *«Ապակենտրոնացումը որպես տեղական ինքնակառավարման արդյունավետության գործոն»* գլխում հեղինակի կողմից ուսումնասիրվել են լիազորությունների ապակենտրոնացման գործընթացների փորձը կայացած տեղական ինքնակառավարման համակարգ ունեցող աշխարհի մի շարք երկրներում, ինչպես նաև ապակենտրոնացման մակարդակի և վերջինիս՝ տեղական տնտեսական զարգացման վրա ազդեցության գնահատման միջազգային պրակտիկայում առկա գործիքակազմերը և դրանց՝ ՀՀ խոշորացված համայնքներում կիրառման հնարավորությունները:

Ատենախոսության երկրորդ՝ *«ՀՀ վարչապարածքային բարեփոխումների ազդեցությունը ապակենտրոնացման գործընթացների կազմակերպման և իրականացման վրա»* գլխում վերլուծվել են ՀՀ խոշորացված համայնքների եկամուտների ապակենտրոնացման մակարդակները, փորձ է արվել գնահատել խոշորացման ազդեցությունը համայնքների ծախսերի կառավարման արդյունավետության վրա: Իրականացվել է նաև համայնքի ղեկավարների լիազորությունների և դրանց՝ ֆինանսական համաչափության գնահատում, ինչի արդյունքում վերհանված խնդիրների լուծման նպատակադրմամբ մշակվել է լիազորությունների արդյունավետության գնահատման գործիքակազմ:

Ատենախոսության երրորդ՝ *«Ապակենտրոնացման գործընթացի կազմակերպման և իրականացման քանակական գնահատման հիմքերը»* գլխում ՀՀ խոշորացված

համայնքների սոցիալ-տնտեսական ցուցանիշների հիման վրա իրականացվել է գործոնային վերլուծություն, մշակվել է հարկաբյուջետային ապակենտրոնացման ցուցանիշների համակարգ՝ փորձելով գնահատել վերջինիս ազդեցությունը տեղական տնտեսական զարգացման ցուցանիշների վրա, ինչպես նաև մշակվել է եկամուտների և ծախսերի ապակենտրոնացման չափման մեթոդաբանություն:

«Եզրակացություններ և առաջարկություններ» բաժնում ներկայացվել են ատենախոսության շրջանակներում կատարված վերլուծության առաջնային եզրահանգումները և ընդհանրացված առաջարկները:

Ատենախոսության ստացված արդյունքների հավաստիությունն ու դրանց գիտագործնական նշանակությունը. Հետազոտության օբյեկտը ՀՀ համայնքներ են: Հետազոտության առարկան ՀՀ համայնքների եկամուտների, ծախսերի, ինչպես նաև համայնքների հարկաբյուջետային ապակենտրոնացման և տեղական տնտեսական զարգացման կապերի բացահայտմանն ուղղված վերլուծությունն է:

Հետազոտության շրջանակներում տեղեկատվական հիմքեր են հանդիսացել ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության, ՀՀ ֆինանսների նախարարության, ՀՀ մարզպետների աշխատակազմերի, ՀՀ համայնքների պաշտոնական կայքերը, ՀՀ վիճակագրական կոմիտեի հրապարակումները, ինչպես նաև միջազգային մի շարք կառույցների պաշտոնական կայքերը:

Հետազոտության շրջանակներում կիրառվել են համեմատության, համադրության, հարցումների, գրաֆիկական մեկնաբանման, ընդհանուր գիտական վերլուծության, դինամիկ և կառուցվածքային դիտարկումների, ինդուցիայի, գործոնային և ռեգրեսիոն վերլուծության մեթոդները:

Հետազոտության շրջանակներում ստացված արդյունքները կարող են կիրառվել ՀՀ 2024-2030 թվականների տարածքային զարգացման ռազմավարության նախագծում:

Ատենախոսության հիմնական գիտական արդյունքները և նորույթը. Ատենախոսության գիտական նորույթները, ըստ հեղինակի, հետևյալներն են.

1. «ՀՀ խոշորացված համայնքների տնտեսական վիճակը բնութագրող ցուցանիշների հիման վրա մշակվել է գործոնային վերլուծության իրականացման մոդել, որի միջոցով

հնարավոր է բացահայտել համայնքների տեղական տնտեսական զարգացման հնարավորությունները: Մոդելը կարող է կիրառվել ՀՀ համայնքներում երկարաժամկետ տեղական տնտեսական զարգացման ուղղությունների արդյունավետ պլանավորման համար:

2. Մշակվել է համայնքների ղեկավարների լիազորությունների իրականացման արդյունավետության գնահատման գործիքակազմ, ՀՀ խոշորացված 64 համայնքների ղեկավարների շրջանում իրականացված հարցումների հիման վրա՝ գործոնների հարաբերական կարևորության կշիռների ստացման մեթոդով: Գործիքակազմը թույլ է տալիս ՀՀ համայնքներում բացահայտել լիազորությունների արդյունավետ իրականացմանը խոչընդոտող հիմնական գործոնները:

3. Մշակվել է ՀՀ խոշորացված համայնքների եկամուտների և ծախսերի ապակենտրոնացման ցուցանիշների համակարգ, ինչի հիման վրա առաջարկվել է ՀՀ համայնքների հարկաբյուջետային ապակենտրոնացման մակարդակի վրա խոշորացման ազդեցության գնահատման մեթոդաբանություն՝ համայնքներում եկամուտների և ծախսերի՝ ՀՆԱ ցուցանիշով կշռված ապակենտրոնացման ինդեքսների կիրառմամբ»:

ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՏԵՆԱԽԱՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ատենախոսությունում առկա են նաև որոշ թերություններ, որոնք ամփոփվում են հետևյալ դրույթներում.

1. Չնայած, որ ատենախոսության առաջին գլուխը վերնագրված է „ապակենտրոնացումը որպես տեղական ինքնակառավարման արդյունավետության գործոն „նույն գլխի երեք պարագրաֆները, այնուամենայնիվ չեն արտահայտում արդյունավետության համալիր գնահատումը: Ընդ որում § 1.3 -ում ներկայացված է է միջազգային փորձը՝ Մոլդովա, Ուկրաինա, Մերձբալթյան երկրներ և այլ արտասահմանյան երկրներ, սակայն կոնկրետ տնտեսական կամ այլ բնույթի արդյունավետության գնահատում չկա:

2. Քննարկելով, իհարկե, բավականին մանրամասն ՀՀ տարբեր համայնքների խոշորացման գործընթացը և դրա արդյունքները ,ինչպես օրինակ, Քաջարանի,

Ջերմուկի, Ծաղկահովիտի և այլ համայնքների մասով, տպավորություն է ստեղծվում, որ այդ գործընթացը ուղղակի նկարագրական բնույթ է կրում, օրինակ, շեշտը դրվում է խոշորացումից հետո պետական բյուջեից կախվածության մեծացման և հարկային ինքնավարության նվազման վրա: Դա բավարար չէ: Անհրաժեշտ էր քննարկել տվյալ համայնքում կոնկրետ բիզնես և ներդրումային միջավայրի փոփոխության խնդիրները, նաև թե ինչ լրացուցիչ բիզնեսներ են կայանում տեղերում: Սա բացակայում է: Նույնը կարելի էր քննարկել սոցիալական խնդիրների լուծման մասով:

3. Կարևորվում է նաև այն ,որ տվյալ համայնքում ձևավորվող ՀՆԱ-ի ինչ-որ մասի և հարկերի տեսքով համայնքներին մասհանումների խնդիրը, օրինակ եկամտահարկի մաս և այլն, բայց սրա հետևանքները և կապը պետական բյուջեի մուտքերի իջեցման հետ քննարկված չէ աշխատանքում:

4. Գույքահարկի մակարդակի չորսանգամյա աճը և լիարժեք գործարկումը նախատեսված է 2026 թվականից, այդ պայմաններում տեղական բյուջեները կտրուկ կավելանան և հարց կառաջանա լրացուցիչ գնահատել այդ հիմքով ծախսերի արդյունավետության գնահատման վերաբերյալ: Ցավոք, այս կանխատեսումը աշխատանքում բացակայում է :

5. Չնայած ինչպես արձանագրված է ատենախոսությունում ՏԻՄ-երին վերապահված է 300 լիազորություն, սակայն չկա գնահատական, թե նախ առկա են համապատասխան պայմաններ դրանք իրականացնելու համար և ինչպես դրանք են իրականացվում:

6. Երկրորդ նորույթում նշվում է, որ մշակվել է համայնքների ղեկավարների լիազորությունների իրականացման արդյունավետության գնահատման գործիքակազմ: Սակայն, մեր կարծիքով, խոշորացված 64 համայնքների ղեկավարների շրջանում իրականացված հարցումները չեն կարող հիմք լինել գիտական նորույթի համար:

7.Ատենախոսության միշտ բնթագլուխներում մանրակրկիտ ներկայացվում են համայնքների ծախսերը, սակայն դրանց արդյունավետության հաշվարկները և գնահատականները բացակայում են:Ծախսերի համակողմանի նկարագրությունը ինքնին ամփոփ եզրակացության չի հանգեցնում:

8 .Աշխատանքում կան մի շարք ոճաբանական և խմբագրական բնույթի թերություններ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այնուամենայնիվ ներկայացված դիտողությունները որոշակի ազդեցություն ունեն հետազոտության գիտական արժեքի վրա:Միաժամանակ ***Քրիստինե Մուրադի Թաթոսյանի՝ «Ապակենտրոնացման ազդեցությունը տեղական տնտեսական զարգացման վրա (ՀՀ նյութերով)»*** թեմայով ատենախոսությունը ինքնուրույն, գիտական արժեք ունեցող և ամփոփ հետազոտություն է, որով ստացված արդյունքները կարող են նպաստել ՀՀ-ում ոլորտի առջև ծառացած հիմնախնդիրների լուծմանը:

Ատենախոսության հիմնական արդյունքները արտացոլված են Scopus շտեմարանում ինդեքսավորված 1 միջազգային հոդվածում, ՀՀ ԿԳՄՍՆ ԲԿԳԿ-ի կողմից ընդունելի հանդեսներում տպագրված 9 գիտական հոդվածներում: Հոդվածները ներկայացված են սեղմագրում:

Առաքված սեղմագիրը համապատասխանում է ատենախոսության հիմնական բովանդակությանը և արտացոլում է դրա հիմնական դրույթներն ու արդյունքները:

Այսպիսով, ***Քրիստինե Մուրադի Թաթոսյանի՝ «Ապակենտրոնացման ազդեցությունը տեղական տնտեսական զարգացման վրա (ՀՀ նյութերով)»*** թեմայով ***ալթենախոսությունը*** համապատասխանում է ՀՀ ԲԿԳԿ-ի «Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» 6-րդ և 7-րդ

կետերի, ինչպես նաև թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող այլ պահանջներին, իսկ հեղինակն արժանի է Ը.00.02-«Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի հայցվող գիտական աստիճանի շնորհմանը:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍ՝

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԴՈԿՏՈՐ, ՊՐՈՖԵՍՈՐ

« 23 » մայիս 2025թ.



Մ.Ս. ՄԵԼԻԿՅԱՆ

ՄԻՔԱՅԵԼ ՍԵՐԳԵՅԻ ՄԵԼԻԿՅԱՆԻ

ստորագրությունը հաստատում եմ՝

ՀՊՏՀ գիտական քարտուղար՝

«23» մայիս 2025թ.



Ն.Հ. ԴԱՐԲԻՆՅԱՆ

